

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունիսը՝ քաղաքում 2 ման, 50 կոպ., դուրսը՝ 3 ման թ:

ՇԱԲԱԹԱՆԱԼ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղեթին ստորագրվի կարելի է լամբազրոյի մօտ:
Գաղեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ լամբազրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Վաճառականը» 1867 թին: Տէրութենի կարգադրութիւնները ծառայողների փոխադրութիւնները և վարձատրութիւնները: Տօրեր և ուրիշ յայտարարութիւններ: Թիֆլիսի նոր քաղաքացիների ընտրելու մասին: Գետնի կրկն խարտեանցի յօդուածի պատճառով: Թաղապետական բանկի Թիֆլիսի բաժանման կանոններից քաղված: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական և քիմիկութիւններ: յայտարարութիւններ:

«ՎԱՃԱՌԱԿԱՆ»

1867 ԹԻՒՆ:

Ինչպէս հրատարակել էինք «Վաճառականի», 30-դ Ռումը 1867 թին «Վաճառականը» կտպվի էնպիսի թերթերի վրայ, որ առիտը հիմնական 4 կէս թերթի տեղ ճիշդ մինչև 6-ը լինի իր մեծութենով: Գալ տարվան ստորագրվողները կստանան ձրիաբար «Առևտրական բառարան», որի մէջ ամփոփված կլինին թէ առևտրական վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռուս փողի հետ համեմատելով: 1867 թին «Վաճառականի» մէջ կտպվին շարունակ ամեն նույն մերումը «Ռուսաց տեղեկագրի» ընկերութենից, ստացած թէ առևտրական և թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր հաճախները: «Վաճառականի» գինը գալ տարի թէ քաղաքում և թէ գուրսը կլինի 5 մ. Գալ տարի «Վաճառականը» կգուրս գայ հինգ շաբթի օրերով: Հիմնականից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքում «Վաճառականի» խմբագրողի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երկեանցի մօտ, նմանապէս և գրաւածառ պ. Ա. Էնփիաճեանցի գրատանը, իսկ օտար քաղաքացիները պէտք է դառնան ուղղակի «Վաճառականի» խմբագրողին էս հասցեով՝ «Վաճառականի» խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսում», իսկ Ռաբէն «Редактору Тифлисского Торгового листка Егору Тер-Александрову въ Тифлисе».

Ինչպէս ենք 1867 թին մեր գաղեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը մեզ որքան կարելի է կարճ միջոցումը, որ կարողանանք ստորագրվողների թին համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՇԱԲԱԹԱՆԱԼ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Թիֆլիսի դաւառապետի մօտ գտնվող աւագ առանձին յանձնարարութիւնների աստիճանաւոր գուրբերակի սեկրետար Իշխան ԱՐԱՄԵԼԻՔԱՆՅԱՆԻ նշանակվեցաւ Թիֆլիսի դաւառապետի մօտ գտնվող կրտսեր առանձին յանձնարարութիւնների աստիճանաւոր փոխաւոր սովետիկ ԵՂԻՍԱՎԵԼՈՒԹԵԱՆՅԱՆԻ մօտ: Իսկ Էնփիաճեանցը նշանակվեցաւ Արամիլիքեանցի տեղը 1866 թ. սեպտեմբերի 15-ին:

Թիլաւի նահանգական կառավարութենի աստիճանաւոր օգնական կոլեկտիկ սեկրետար Սորմոն ՄԵԼԻՔԱՐԳՍԵԱՆՅԱՆԻ արձակվեցաւ էդ պաշտօնից իր խնդրով 1866 թ. սեպտեմբերի 17-ին:

Ելիսավետուպոլի նահանգական կառավարութենի սեղանապետ կոլեկտիկ քիմիստարտոր ՏԵՐ-ԱՋԱՐԵԱՆՅԱՆԻ արձակվեցաւ էդ պաշտօնից իր խնդրով 1866 թ. հոկտեմբերի 27-ին:

Ելիսավետուպոլի նահանգական կառավարութենի թարգման գուրբերակի սեկրետար Միրզաբէկ ՄԵԼԻՔԱՐԱՋԱՆԵԱՆՅԱՆԻ արձակվեցաւ էդ պաշտօնից իր խնդրով 1866 թ. հոկտեմբերի 11-ին:

Արձակվեցաւ ծառայութենից իր խնդրով Կովկասեան Իստեմեղատի կառավարութենումը գտնվող կոլեկտիկ ասետոր ԱԼԴԱԴԱՆԵԱՆՅԱՆԻ 1866 թ. հոկտեմբերի 30-ին:

Կովկասեան № 23 լինեյի բատալիօնի պորուչիկ ԱՎԵՏԵԱՆՅԱՆԻ ստացաւ շտաբ կապիտանի աստիճան 1866 թ. նոյեմբերի 2-ին:

Կովկասեան № 25 լինեյի բատալիօնի պորուչիկ ԱՄԲԱՐԴԱՆԵԱՆՅԱՆԻ ստացաւ պորուչիկի աստիճան միկնոյն թին:

Կովկասեան № 24 լինելնի բառալիօնի շտաբակալիտան ՏԻԳՐԱՆՆԱՆՅՈՒՄ տաղաւ 3-դ աստիճանի Աննայի նշանը 1866 թւի հոկտեմբերի 31-ին:

Կովկասեան № 20 լինելնի բառալիօնի մայոր իշխան ԵՐԿԱՅՆԱՐԱՋՈՒԿ-ԱՐ-ՂՈՒԹԱՆՅՈՒՄ տաղաւ Կայսերական թագով զարդարած 2-դ աստիճանի Ստանիսլաւայի նշանը, մի և նոյն թւին:

Կովկասեան № 29 լինելնի բառալիօնի շտաբ - կապիտան ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅՈՒՄ տաղաւ 3-դ աստիճանի Ստանիսլաւայի նշանը միևնոյն թւին:

ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Քուծայիսի դառառական կառավարութեան 1867 թւի յունւարի 4-ին նշանակւած է Ղուբանի պրովինտի մագաղինից 2300 չեթվերա ալիւր և 200 չեթվերա կրուպայի և Գոլովինսկի մագաղինից 1000 չեթվերա ալիւր և 90 չեթվերա կրուպայի Լադարեան մագաղինը հասցնելու տորդը:

Կովկասեան ինժեների կառավարութեան մը էս գեկտեմբերի 19-ին նշանակւած է պերետորովայ թիֆլիսումը ինժեներների ուսումնարանի համար տներ շինելու համար: Էդ գործի համար նշանակւած է մօտ 175,000 մ:

Գորու նահանգական կառավարութեան մը 1867 թւի մարտի 20-ին նշանակւած է Գորու նահանգի Յիւրաճմա և Ախալգորի ա-նումով զիւղերումը գտնւած իշխան Գաւիթ Էրիսթովի կայքի ծախելու տորդը: Էդ կայքը Կովկասեան Պրիկազի պարտ է 3810 մ:

Շուշու նահանգական կառավարութեան մը 1867 թւի մարտի 17-ին նշանակւած է ննջեցեալ Ղարաբաղի Ախմէդ խանի ժառանգների նրա որդի Խանլար Աղա Զեյնա-չիրի, նրա աղջիկ և գնեբալ-մաթօր Աղա-լարով Բեկի աղայի Բաքուի գաւառի Ղա-րամանլի-Ղաւալի-Գեկով, Նամար, Գեր-բենդլի-Զանլի-Ղօրն-Բինասի, Մալ-Բի-նասի և Հաջի-Ալի անունով զիւղերումը գտնւած կայքի ծախելու տորդը: Էդ կայքի վրայ Կովկասեան Պրիկազի պարտը կայ 30,000 մ:

Կովկասեան Պրիկազումը 1867 թւի ապ-րիլի 30-ին նշանակւած է հանդուցեալ կու-լեթսկի սովետնիկ Առաքեալ Ղամադեանցի թիֆլիսի գաւառի Բորչալուի Ղասումլի զիւ-ղումը գտնւած այգու ծախելու տորդը: Էդ այգու վրայ Պրիկազի պարտը կայ 3200 մ:

Մի և նոյն տեղումը 1867 թւի փետրւարի

27-ին նշանակւած է կուլեթսկի ասետրի կին Եկատերինայ Սերբինովի թիֆլիսի 1 մասի 3-դ կվարտալումը գտնւած տան ծախելու տորդը: Էդ տան վրայ Պրիկազի պարտը կայ 8000 մ:

Շուշու նահանգական դատարանը էս տարւայ նոյեմբերի 2-ին Նուխեյի Արդու-րաճիմ Արդու Ազիզ Օղլուն կուտր յայտ-նեց: Էդուր համար էլ մասնաւոր մարդկանց յայտնում է, որ թէ սրան պարտ էլած փո-ղերի մասին և նամանակէս սրանց իրանցը պարտ էլած փողերի մասին յայտնեն յիշեալ դատարանին վերոյիշեալ թւիցը Նուխումը բնակիւղները երկու շարաթվան մէջ, Ռու-սաստանի միւս տեղերումը բնակիւղները չորս ամսվան մէջ իսկ սահմանից դուրսը գտնուողները մէկ տարւան մէջ:

ԹԻՖԼԻՍ

գեկտեմբերի 17—1866.

Անցեալ շաբաթ օրը էս ամսի 10-ին քաղաքիս կուլի գահլեճումը հանդի-սաւոր քուէարկութեանով ընտրվեցաւ եկող երեք տարւայ համար քաղաքա-զուլա: Ժողովրդից ընտրված 400 քուէ-արկուներից ներկայ գտնվեցաւ էդ օրը միայն 347 հոգի: Ժամի 10-ին սկսվե-ցաւ գործը պ. Գաւառապետ Օրլովսկու ճառով: Ժողովրդի կողմից առաջարկ-վեցան մէկ քանի պատուաւոր մարդ-կանց անուններ քուէ գցելու, բայց զը-րանցից մէկ քանիսը պաշտօնական, իսկ միւսները անձնական գործերով զբաղ-ված լինելու պատճառով, յայտնեցին իրանց գոհունակութիւնը ժողովրդին իրանց շնորհ անելու համար և ցան-կացան ազատ մնալ էդ հասարակական վեմ պաշտօնի համար քուէ ստանա-լուց: Քուէարկութիւնը կատարվեցաւ և քաղաքազուլա ընտրվեցաւ գեներ-րալ-մաթօր Երեմիայ Արծրունին միւս-ներից աւելի քուէ ստանալով և նրա փոխանորդ մնաց Իշխ. Մ. Բէհբուդեանցը:

Անկարելի է ծածկել հասարա-կութենի ուրախութիւնը և մի և նոյն ժամանակը չենք կարող և մենք լը-ռել մեր ներքին ցնծութիւնը յայտնե-լու հնդուր մասին, որ երբէք գոնեա թիֆլիսումը էդպիսի հանդիսաւոր և

կանոնաւոր ընտրութիւն էլած չէ և տեսած չենք: Քուէարկուները վերին աստիճանի խոհեմութեանով վարվեցան իրանց պարտաւորութիւնը կատարելիս և միանգամայն հասկանում էին իրանց պաշտօնի վեմութիւնը: Առութիւնը և կանոնադրութիւնը զիւրաւոր յատկու-թիւններն էին էդ ընտրութենի ժա-մանակը և էս ապացոյց է էն բանին, որ մեր ասիական քաղաքումն էլ ժո-ղովուրդը ունի իր մէջ օրինաւոր ու հասկացող մարդիկ. վերջապէս ապա-ցոյց է, որ ժողովուրդը արդէն հաս-կանում է էլել իր լաւն ու վատը: Թէ ո՞րքան յաջողակ է այժմեան ընտրու-թիւնը և թէ ի՞նչ հեռանքներ պէտք է ունենայ էդ բոլորը, մենք էդ մասին վստահաբար կսպասենք ապագային—տեսնելու և զովելու ամեն լաւ գործը: Մեր կողմից էսքանը միայն կասենք, որ պ. Ն. Արծրունին հայազգի յառաջադէմ անձներից մէկն է և ինքը մէկ քանի անգամ լինելով Եւրոպայի մեծ մեծ քա-ղաքներումը ծանօթ է բոլոր քաղաքա-կան բարեկարգութիւններին: Հարկա-ւոր ենք համարում էստեղ աւելաց-նել, որ ձէն ունեցողներ (гласные) ընտրվեցան բաւական ընտիր երի-տասարդներ, որոնք պատրաստ են իրանց ուժը և զիտութիւնը չնայելու հա-սարակութենի օգուտներին: Կրկնել ենք և էլի կրկնում ենք, որ տէրութիւնը իր կողմից ինչ որ միայն կարելի էր չնայեց, հասարակութիւնը ուրախու-թեանով ընդունեց և գործ զրեց իր ի-րաւունքը—մնում է ընտրված պաշտօ-նակալներից և նրանց պարագլուխ պ. քաղաքապետից սպասել էն բոլոր օ-գուտները—գէտ ի որը մեր հաւատը մեծ է:

Ա. Ե.

ՂԵՒՈՆԴ ԵՐԵՅ ԽԱՐԱՋԵԱՆՅՈՒ ՅՕԴ-ՈՒԱԾԻ ՊԱՏՃԱՍՈՎ:

„Առաւաականի“, 36-դ, 37-դ և 38-դ № № ներումը տպեցինք ՂԵՒՈՆԴ ԵՐԵՅ ԽԱՐԱՋԵԱՆՅՈՒ ՅՕԴ-ՈՒԱԾԻ հոգեւորական-ների վրայ մէկ քանի խօսք, անունով

յօղուածը, որն որ շատերի համար անբաւականութենի պատճառ է դառնել: Եւ էդ անբաւականները ինչպէս լսում ենք զլիաւորապէս մեր մէկ քանի հողեորականներն են, որոնք որ շատ նեղացել էին արժանապատիւ երեցի խօսքերից, թէ մեր հներից էլ օգուտ չկայ, պէտք է նոր և զիտեական երիտասարդներին խրախուսենք հողեորական դառնալու: Ինքը պատուարժան Ղևոնդ երեցը էդ խօսքերն ասելով չէ կամենում պարծենալ, թէ ինքը նորերիցն է, իսկ ծեր քայանները հներից: Շատ ծեր քահանայներ կան մեղանում, որոնք որ ամեն պատուի և յարգանքի արժանի են—նրանց մաղերը սպիտակ է, բայց ցանկութիւնները աղին և միտքը նոր. ուրեմն երեցի վերցիշեալ խօսքերը չեն վերաբերում առ հասարակ բոլոր մեր ծեր քահանայներին:

Արժանապատիւ Ղևոնդ երեցի ցանկութիւնները շատ աղին են և քահանաների վիճակը բարեկեցութեամբ համար առաջարկած կարծիքները շատ հիմնաւոր: Իսկ խօսքերն ասելով մենք չենք կամենում սեղել, թէ նրա առաջարկածիցը զերազանցը չի լինիլ և անկարելի է, չէ, շատ բաւերը և յարմարները կարող են լինիլ և էդուր համար էլ «Առաքաւական», խմբագրութիւնը միշտ ուրախութեամբ ընդունելու է էս առաքաւական վերաբերեալ աւելի կատարեալ առաջարկութիւններ տպելու: Գործը ընդհանուր դործ է, ողջ հասարակութենին վերաբերեալ, ուրեմն էդտեղ մասնաւոր կիրքը կամ տոկոսութիւնը անարժան և արհամարհելի պէտք է համարվի ամեն բանիմաց մարդու աչքումը:

Մեզ ասում են թէ ի՞նչ ձեր դործ է հողեորականների վրայ դրելը, ձեռք վեր առնէք:

Մարդ մարդու պակասութիւնն ասում է էն ժամանակը, երբ որ նրան լաւ ճանաչում է և շատ էլ սիրում է և էդպիսով ուզում է, պակասութիւնները յայտնելով, ուղղել:

Մենք սիրում ենք մեր հողեորականներին մեր զլխիցն առաւել ոչ թէ անմեղ տեղը, այլ հիմնաւոր պատճառներով: Հողեորականները և առհասարակ հողեորականութիւնը մեզ հայերիս համար հիմի մէկ զօրաւոր կապ է, որն որ մօտեցնում է հայերին միմեանց մօտ հողեորապէս: Գրանք անխախտ պահպանելով մեր եկեղեցու ծէսերը, հաստատ պարիսպ են հայերի համար ազգութեայութիւնից և հաւատաւորութեանից պահպանելու: Ուրեմն հայութեան պարիսպներին, մեր ազգի հաստատ պահպաններին ի՞նչպէս չսիրենք: Ով ի՞նչ ուզում է ասէ, բայց մենք սիրում ենք և սիրելու ենք դրանց: Եւ դրանք, զիտեալով մեր բարի ցանկութիւնը, բոլորովին չպէտք է նեղանան մեր և ուրիշների դրուածներից, որովհետեւ բոլորն էլ դէպի դրանց լաւութիւնն է ուղղած: Իսկ մենք չենք դադարելու բուրովին մեր ճշմարիտ և անկիրք խօսքերն ասելուց, քանի էլ որ դրանց սիրում ենք. բայց որովհետեւ մեր դէպի դրանց ունեցած սէրը վերջ չունի, էնդուր համար էլ անդադար դրելու ենք և դրելու դրանց վրայ, մեր սէրը և համակրութիւնը ցոյց տալու համար:

ԹԱՂԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԻՖԼԻՍԻ ԲԱՅԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ ԲԱՂՎԱԾ:

2. Կուպոններով շահի տալը:

1.) Բանկի բաժանումը վճարում է 5% բանկի տոմսակների, 5% լաւարեցով ներքին փոխառութեանի տոմսակների, Պետերբուրգի և Մոսկովի հաւատարմական ընկերութիւնների (кредитныя общества) տոմսակների և պարտաթղթերի կուպոնների շահը:

2.) Մինչև ներկայացնելը կուպոնները պէտք է կտրուել և տեսակները ջնկել: Էդ կուպոնների կասկածոտ լինելիս պահանջվում է և էն տոմսակը, որից կտրած է կուպոնը: Պետերբուրգի և Մոսկովի հաւատարմական ընկերութիւնների պարտաթղթերի կուպոնների հետ պէտք է ներկայացնել և իսկ պարտաթղթերը:

3.) Կուպոնները պէտք է ողջ լինին և ոչ թէ կտրոններից շինած և պէտք է ունենան վրէն ինչպէս նոսմերները, նամապէս և ստորագրութիւնները: Էն կուպոնները, որոնց կամ թուղթը և կամ տառերը փչացած են, չեն ընդունվիլ վճարվելու: Եթէ մէկի կուպոնը պատահաւորաբար փչացել է, կարող է դառնալ նա էդուր մասին Պետերբուրգ թաղաւորական բանկը, որն որ գործի հանգամանքները քննելուց և հարկաւոր տեղեկութիւնները ժողովելուց յետոյ վարվում է օրէնքների հիման վրայ:

4.) Մետաղէ տոմսակների կուպոնների ներկայացնողին վճարվում է փողը ոսկով կամ մեծ սպիտակ փողով արծաթէ փողի իսկական դնի վրայ:

5.) Բանկի բաժանումը կարող է վճարել և էն կուպոններին փողը, որոնց մինչև ժամանակի լրանալը մնում է 6 ամսից սրակաս, շահը դուրս դալով:

3. Տիրաժումը դուրս եկած տոմսակների հասնելու փողի վճարելը:

1.) Բանկի բաժանումը վճարում է տիրաժումը դուրս եկած ներքին փոխառութեանի տոմսակների, բանկի տոմսակների և Պետերբուրգի և Մոսկովի հաւատարմական ընկերութիւնների պարտաթղթերի համար հասնելու փողը:

2.) Տիրաժումը դուրս եկած և վճարելու համար ներկայացրած տոմսակները և պարտաթղթերը պէտք է ունենան վրէն տիրաժումը դուրս դալու տարուցը սկսած բոլոր կուպոնները, եթէ ոչ, պակաս կուպոնների փողը կըռնվի տոմսակատիրոջ հասնելու փողիցը:

3.) Տիրաժումը դուրս եկած տոմսակների փողի վճարելիս բռնվում է փոխանցելու համար $\frac{1}{5} \%$:

4. Փոխանցելու տոմսակները:

1.) Բանկի բաժանումը փոխանցելու տոմսակներ է տալիս բոլոր էն քաղաքները, որտեղ կան թաղաւորական բանկի կանտոններ և բաժանումներ: Փոխանցելու դուրս պէտք է 200 մանեթից պակաս չլինի: Փոխանցելիս առնվում է հետեւեալ փողերը:
200 մ.— 1000 մ.— $\frac{1}{4} \%$ կամ 100 մ.— նիթին 25 կ.

1001 մ.—30000 մ.— $\frac{1}{5}\%$ կամ 1000 մանեթին 2 մ.

30001 մ.—բարձր— $\frac{1}{10}\%$ կամ 1000 մանեթին 1 մ.

2) Փոխանցելու տոմսակի ստացողը մինչև ստորագրելը պէտք է կարդայ և տեսնէ թէ արդեօք իր անունը, կամ փողի ստացողի անունը, կամ քաղաքի անունը և կամ փոխանցելու դումարը ուղիղ է գրած թէ չէ:

3.) Փողերը կարելի է փոխանցել և տեղեկրաֆով և էլուր համար առնվում է $\frac{1}{4}\%$ կամ 1000 մանեթին 2 մ. 50 կ. և բաց ի էդ առնվում է տեղեկրաֆի տարեֆով 4 դեպեշնի զինը, իսկ եթէ ստացողի հասցեն երկար է $4\frac{1}{2}$ դեպեշնի զինը:

4.) Փոխանցած փողերի ստացողները եթէ լաւ յայտնի չեն բանկի բաժանմանը, պէտք է պոլիցիայի կամ յայտնի մարդկանց վկայութիւնը բերեն, որից երևում լինի, որ նրանք էն մարդիկն են, ում վրայ ուղարկած է փողը:

(կշարունակվի)

ՋԱՆԱԶԱՆ ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Պետերբուրգումը տալիս առուտուրին և արհեստին վերաբերեալ գաղեթները և ժուրնալները: Ինչպէս էս տարի, նմանապէս և զալ տարի Պետերբուրգումը հրատարակելու են:

1) Биржевые вѣдомости, съ учено—литературными прибавленіями (Բիրժայի համբաւարեր, ուսումնական և բանասիրական յաւելումներով): Էս գաղեթը դուրս է գալիս ամէն օր, իսկ յաւելումները ամէնը մէկ անգամ: Տարեկան զինն է 18 մ., իսկ կէս տարվանը 10 մ.:

2) Вечерняя газета при Биржевыхъ вѣдомостяхъ (Երեկոյեան գաղեթ Բիրժայի համբաւարերի հետ): Սա էլ դուրս է գալիս ամէն օր և տարեկան զինն է 7 մ., իսկ կէս տարվանը 4 մ.:

3) Журналъ Мануфактуръ и Торговли (Մանուֆաքտուրայի և առուտորի ժուրնալ): Սրա տարեկան զինն է 10 մ. և դուրս է գալիս ամէն ամիս:

4) Журналъ Конозаводства (Չխապանութեան ժուրնալ): Դուրս է գալիս ամէն ամիս և տարեկան զինն է 6 մ.:

5) Промышленная газета (Արհեստական գաղեթ): Սրա տարեկան զինն է 6 մ. 50 կ., իսկ կէս տարվանը 3 մ. 50 կ.:

6) Русскій Ремесленникъ (Ռուսաց արհեստաւոր): Տարեկան զինն է 4 մ.:

7) Сборникъ свѣдѣній и матеріаловъ по вѣдомству Министерства Финансовъ (Ֆինանսների միջոցաւ տեղեկութիւնների և նիւթերի ժողովածու): Սրա տարեկան զինն է 7 մ., իսկ կէս տարվանը 4 մ.:

8) Техническій сборникъ (Արհեստական ժողովածու): Տարեկան զինն է 5 մ., իսկ կէս տարվանը 3 մ.:

9) Торговый сборникъ (Առուտական ժողովածու) Սրա տարեկան զինն է 12 մ., իսկ կէս տարվանը 6 մ.:

Հաշտարխանից առւտրական համբաւ: Գրումեն Հաշտարխանից, որ էստեղ անցկացած նոյեմբերի 15-ին Սուրխիսու բաժնակի փաթիւն էլ է 11 մանեթով, Աստարադի բաժնակիւնը՝ 12 մ. 50 կ., Մաղանդարանիւնը՝ 13 մ.: Գերբենդի տորոնը 6 մ. 50 կ., Մաղանդարանի ապրեւումը 150 մ.: Հաշտարխանից մինչև Մոսկով ցամաքով ապրանքների տանելու համար առնումեն փիթին 1 մ. 80 կոպեկից—2 մ.:

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Պետերբուրգ նոյեմբերի 29:

Կուրսը Լոնդոնի վրայ . 32 պէնս:
Պարիժի վրայ . 334 $\frac{1}{2}$ տանալմ:
5% Լատարեյով առաջին փոխառութեան տոմսակները 112 $\frac{1}{4}$ մանեթ:
— երկրորդինը . 106 մանեթ:

Թիֆլիս, դեկտեմբերի 17:

Շաբաթը Ֆրանսիացոյ 9 մ. 80 կ.
— Ռուսեր . 10 մ. 20 կ.
Արծաթը 84% . 200 մ. —
— 72% . 50 մ. —
Ոսկին 6 մ. 65 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎՐԱՅՆԵՐԷՆ յԺԱՄԱՆԱԿ — ՊԵՏԵՐԲԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ: ԱՆՈՒՆՈՎ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԱԶԵԹԸ 1867 ԹԻՒՆ:

„Ժամանակ“ անունով Թիֆլիսի վրացերէն գաղեթը 1867 թւին էլ կը հրատարակվէ էն կարգով և ուղղութեամբ, ինչպէս հրատարակվում է էս 1866 թւին:

Էդ գաղեթի պրոդրաման մնում է մի և նոյնը, ինչ որ էս տարի էր: Էս տարվան պէս „Ժամանակը“ կհրատարակվէ շաբաթը մէկ անգամ, ուրբաթ օրերով, մէկ թերթից մինչև մէկ ու կէս թերթ մեծութեամբ:

Տարեկան զինը քաղաքումս առանց տուն հասցենելու 6 մանեթ, իսկ փոստ հասցենելով և դրսի քաղաքներ ուղարկելով՝ 7 մանեթ:

Գաղեթին ստորագրվել կարելի է „Ժամանակի“ խմբագրատանը, որն որ գտնվում է Պ. Մելքերշիլու և ընկ. ապարանումը:

Դրսի քաղաքները պէտք է դառնան էս գաղեթին ստորագրվելու համար էս հասցեով՝ Въ Тифлисъ. Въ контору редакціи грузинской газеты „Время“, при типографіи Меликова и К^о.

Խմբագրող ԳԵՐԳԻ ՄԵԼԵՔԵՐՇԻԼԻ:
Հրատարակիչ ՍՏԵՓԱՆ ՄԵԼԻԿ-ԳԻՇՎԻԼԻ:

Դուրս եկաւ Պ. Հ. Լեֆիաճեանցի և ընկ. ապարանից տունն ձին տետրակով „Վաճառականից“ դուրս տալով „ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՌՈՒԹՆԻ ՆՈՐ ԿԱՆՈՆՍԻՐՈՒԹԻՒՆԸ“ և ծախվում է Պ. Ա. Լեֆիաճեանցի գրքատանը հատը 20 կոպեկով: Տալ օրինակից աւելի առնուներին կապիտացիոյ 20%: